<<Հաստատում եմ>>
Նաիրի համայնքի ղեկավար
______________ Ն. Սարգսյան
<<20>> սեպտեմբեր 2024թ.

# ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
## N <<ԿՄՆՀ-ԳՀԾՁԲ-24/27>>

1. Պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը. **Նաիրիի համայնքապետարան, Հայաստանի Հանրապետություն, ք. Եղվարդ, Երևանյան 1:**

2. Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը. Գնման առարկա է հանդիսանում **Նաիրի համայնքի կարիքների համար Արագյուղ բնակավայրում պուրակի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների** ձեռքբերումը: Գնման գործընթացն իրականացվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի համաձայն:

3. **Հրավերը և դրանում կատարված փոփոխությունները.** <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 06-ի թիվ 386-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային ձևով գնումների կատարման>> կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան կազմվել է հրավեր, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի **2024 թվականի սեպտեմբերի 03-ին** կայացած նիստում: Հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

4. **Գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները.** Գնման վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, պարզաբանումներ չեն ներկայացվել:

5. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները. <<ԿՄՆՀ-ԳՀԾՁԲ-24/27>> ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացվել է թվով մեկ հայտ՝

| Հ/հ | Հայտ ներկայացրած մասնակցի | | |
|---|---|---|---|
| | անվանումը | Կապի միջոց | Տ/Փ-ի ստացականի հ/հ |
| 1 | <<ԱՄԷԼԻ>> ՍՊԸ | amalyan.davtyan@mail.ru հեռ. 099-91-72-74 | 000248296 |

6. Հայտով ներկայացված գները.

| Հ/հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի կողմից առաջարկված գնային առաջարկը (ՀՀ դրամ), ընդ որում | | |
|---|---|---|---|---|
| | | ինքնարժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| Չափաբաժին 1 | | | | |
| 1 | <<ԱՄԷԼԻ>> ՍՊԸ | 295 000 | - | 295 000 |

7. **Հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները.** Հայտերը գնահատվել են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և հրավերով սահմանված կարգով, և գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի **2024 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 3** որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվել.

-N 1 չափաբաժնի մասով <<ԱՄԷԼԻ>> ՍՊԸ–ն:

8. **Հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը.** <<ԿՄՆՀ-ԳՀԾՁԲ-24/27>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտեր չեն մերժվել:

9. **Պայմանագիրը, իսկ գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.**

Չափաբաժին 1

**2024 թվականի սեպտեմբերի 19-ին** Պատվիրատու՝ **Նաիրիի համայնքապետարանի**, որը գտնվում է **ք. Եղվարդ, Երևանյան 1** հասցեում, և Կատարող՝ **<<ԱՄԷԼԻ >> ՍՊԸ** -ի, որը գտնվում է **ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ., 32 շ., 45բն.** հասցեում, միջև կնքվել է **Նաիրի համայնքի կարիքների համար Արագյուղ բնակավայրում պուրակի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների** ձեռքբերման գնման պայմանագիր N <<ԿՄՆՀ-ԳՀԾՁԲ-24/27>>: Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **295 000 (երկու հարյուր իննսունհինգ հազար)** ՀՀ դրամ:

10. **Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը.** Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

11. **Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները.** Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովի քարտուղար ______________ Մ. Պապյան

*(Կազմվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի համաձայն)*